*518. ՁԻԹՀԱՆԻ ՄԵԾ ՔԱՐԻ վրա, գյուղամիջում, 3 տող.*

ԹՎ ՌԾԲ
ԵՍԱԿԷ·ՊԷՀԱՋ

ԹՎ. ՌԾԲ: (1603) | ԵՍ . . . :

*Ծանոթ. Գծագիրն ստացել ենք Գ. Գրիգորյանից։*

*519. ԽԱՉՔԱՐ, գտնվում է գերեզմանատան մեջ, ճակատին 1 տող.*

ՊՐԷԼՂԱՆ

Պ(Ա)Ր(ՈՆ) ԷԼՂԱՆ:

*Ծանոթ. Գծագիրն ստացել ենք Գ. Գրիգորյանից։*

*520. ՏԱՊԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, գտնվում է «Վանք» կոչվող գյուղատեղու գերեզմանոցում, Հորսից մոտ 4 կիլոմետր արևելք. վրան 1 տող.*

ԱՅՆ ՄՐԱԾՈՂՈՐՄՍԵՐԱՆՂ

ԱՅՆ . . . ՏՐ. ԱԾ. ՈՂՈՐՄԻ ՄԻՐԱՆՇԻ(Ն):

*Ծանոթ. Անձնանունը կասկածելի է։ Գծագիրն ստացել ենք Գ. Գրիգորյանից։*

*521. ՏԱՊԱՆԱՔԱՐ, տափակ, նախորդի մոտ, երեսին 2 տող.*

ԱՅՍԱՀՆԳԻՍՄ
ՀԱՐԱՅՊԵՄՔԱՀԱՆԱՅ

ԱՅՍ Ա ՀԱՆԳԻՍՏ| ԿԱՐԱՊԵՏ ՔԱՀԱՆԱՅ(Ի)Ն:

*Ծանոթ. Գծագիրն ստացել ենք Գ. Գրիգորյանից։*

## 32. ՔԱՐԱԳԼՈՒԽ

*Այս գյուղում արձանագրություններ ունեցող հին հուշարձանները գտնվում են գյուղի շրջապատի հանդերում։ Դրանցից կարևորները հետևյալներն են.*

**1. Ս. Մամասի վանք,** *գտնվում է գյուղից մոտ երեք կիլոմետր դեպի հարավ, բարձրադիր հարթության վրա՝ «Հին Սալլի» կոչվող գյուղատեղի մոտ։ Այս վանքի հիմնադրության պատմությունը սյունյաց պատմագիրը հասցնում է մինչև «ի ժամանակս թագաւորութեանն Հայոց ցեղին Արշակունեաց»։ Գրիգոր Լուսավորչի հետ Կեսարիա գնացած սյունյաց իշխանները Փոքր Ասիայից բերում են ս. Մամասի նշխարները և նրանց վրա կառուցում վկայարան[1]։*

XIII *դարի առաջին կեսում այդ հնամենի վկայարանի տեղում Սեթ կրոնավորի և Մարզպանի ծառա ումն Սաճիի կողմից շինվում են իրար կից երկու փոքրիկ շենքեր։ Սրանցից հյուսիսայինը մի փոքրիկ մատուռ է, իսկ հարավայինը փոքր եկեղեցի՝ այն հազվադեպ առանձնահատկությամբ, որ նրա բեմը միջնորմով բաժանված է երկու մասի՝ երկու սեղանով (Սյունիքում ճարտարապետական այս ձևը կրկնված է նույն Վայոց ձորի Հերհերի ս. Սիոն վանքի հարավային եկեղեցու մեջ)։ Եկեղեցին կոչվել է ս. Պողոս։*

*Ներկայումս այդ շենքերն ավերված են և նրանցից մնում են միայն պատերը՝ երկու մետր բարձրությամբ։ Ավերակների մեջ վաղագույն վկայարանից ոչ մի հետք չկա. եղած մնացորդները վերաբերում են* XIII *դարի կառուցումներին։*

*Վանքի արևմտյան կողմում պահպանվել է մի փոքրիկ գերեզմանատուն, ուր հին խաչքարերի և գերեզմանաքարերի հետ մեծ քանակությամբ շենքի ճարտարապետական բեկորներ օգտագործված են որպես գերեզմանաքարեր։ Դրանցից մի քանիսն իրենց վրա կրում են վանքի շինարարական մեծ արձանագրության մասերը։*

**2.** *«Հին Սալլի», գյուղատեղ, գտնվում է Մամասի վանքից մոտ 300 մետր դեպի հյուսիս։ Այստեղ կանգուն են չորս խաչքարի պատվանդաններ, որոնց երկուսի վրա կան խաչքա-*

[1] Ստ. Օրբելյան, *Պատմութիւն, Ծ գլուխ, էջ 265, Թիֆլիս, 1911։*

րեր՝ առանց արձանագրությունների. երրորդ խաչքարն ընկած է պատվանդանի մոտ և ունի միայն թվական, իսկ չորրորդը, որի վրա եղել է Սմ. Օրբելյանի անվան հիշատակությունը ընդարձակ արձանագրության մեջ՝ այժմ չկա։ Բարեբախտաբար գոյություն ունի 1932 թ. կանգուն այս խաչքարի լուսանկարը, որից կատարվում է ներկա վերծանությունը։

3. Թուխ մանուկ, մատուռ, գտնվում է գյուղից արևելք, մոտ երեք կիլոմետր հեռու՝ բարձր բլրի գագաթին։ Այժմ դա հասարակ ու խառն քարերով շարված ու փայտածածկ մատուռ է, բայց նույն տեղում մնում են սրբատաշ քարերով շինված հին եկեղեցու հիմնապատերը և նրա սրբատաշ քարերի բազմաթիվ բեկորները, որոնք օգտագործված են մատուռի պատերի մեջ և թափված են շրջապատում։ Այդ հին շենքը, դատելով նրա բեկորների մնացորդներից, պետք է ենթադրել, որ մեր հնագույն և նշանավոր կառուցվածքներից մեկը պետք է եղած լինի։ Ներկա մատուռի հյուսիս-արևմտյան անկյունի մոտ կանգնեցված են երկու կոթողանման քարեր, որոնց վրա կան V—VII դդ. հատուկ կակաչների և խաղողի վազի ու տերևների ժապավենաձև զարդեր։ Դրանք հին շենքի մուտքի կողերի և բարավորի մասերն են։

Թուխ մանուկի շուրջը տարածվում են տների ավերակները և կանգուն խաչքարեր, նրանցից մեկն ունի արձանագրություն։

Այս հուշարձանից հավաքած 8 արձանագրություններից միայն մեկն էր հրատարակված։ Չհրատարակվածներից առանձնապես կարևոր է մի տապանագիր, 1316 թ., որի մեջ հիշատակված է ՔԱՐԱԳԻԼՈԽ գյուղ—անունը։ Հայտնի է, որ ինչպես Սմ. Օրբելյանի պատմության մեջ, այնպես էլ հին աղբյուրներում այս գյուղը չի հիշատակվում։ Այսպիսի երևույթը պատճառ է դարձել, որ հնագետ Հ. Եղիազարյանը Քարագլուխ գյուղը նույնացրել է հին Խարաշկոնք գյուղի հետ, որն անշուշտ սխալ է[1]։

Հնարավոր է, սակայն, որ Քարագլուխ գյուղը հնում գտնվելիս է եղել Թուխ մանուկի բլրի ստորոտում՝ ձորամիջին։ Այժմ մնացել են մի գյուղատեղի ավերակները, որը տեղացիների կողմից անվանվում է Քալլա։

4. Խաչքար, կանգնած է գյուղից հարավ-արևելք, խճուղու եզրին, մի մեծ, բնական ժայռաբեկորի վրա՝ 1290 թ. արձանագրությամբ։

Ժողովածուում ամփոփված են 23 արձանագրություններ, որոնցից 16-ը հրատարակվում են առաջին անգամ։

## Ս. ՄԱՄԱՍԻ ՎԱՆՔ

**522. Ս. ՊՈՂՈՍԻ** *բեմի միջնորմի վրա, հաջորդի անմիջական տակին, որպես նրա շարունակություն, 5 տող՝*



⌈Ե⌉Ս՝ ԲԱՐԵՃՈՐՏՍ, ՏՈՒԻ Ս̅Բ̅ ՄԱՄԱ⌊ՍԱՑ⌋ ՋԾԱՂԿԵ⌈ՂՈ⌉ՅՆ ԱՅԳՈՅՆ ՋՄԵՐ ԲԱԺԻՆ՝ ՄԽԻԹԱՐՍ. ՀՈ⌈Գ⌉ԻՈՅՆ. Ի ՏԱՐՈՒՄՆ ԱՒՐ ԺԱՄ. ՀԱԿԱՌԱԿՔՆ :⌈Ց⌉ՃԺԸ: ՀԱՅՐ⌊ԱՊԵՏԱՑՆ⌋ ՆՋՈՎ.ԵԱԼ ԵՂԻՑԻՆ ԱՑ.:

Ծանոթ. *Իր բովանդակությամբ կապված է հաջորդի հետ. Նույն Ծաղկելույն այգու մասն է նվիրվել վանքին, հետևաբար գրվել է հաջորդի հետ միաժամանակ։*

[1] Հ. Եղիազարյան, *Ազիզբեկովի շրջանի կուլտուրայի հուշարձանները, Երևան, 1955, էջ 75։*

*Առաջին անգամն է հանդիպում ԲԱՐՍՃՈՐՏ անձնանունը։ Նման կազմությամբ կան ԲԱՐԵՄԱՆՈՒԿ, ԲԱՐԵՏԻԿԻՆ անուններ, իսկ հակառակ դասավորությամբ՝ ՃՈՐՏԻԿԻՆ, որը հավանաբար ՃՈՐՏ-ՏԻԿԻՆ անվան սղումն է։*

*Հրատ. Քաջբերունի, Փորձ, 1879, № 1, 104—105։ Ալիշան, 162 (երկուսն էլ խիստ թերի և աղճատված)։*

***523.*** ***Ս. ՊՈՂՈՍԻ*** *և* ***ս.*** *Պետրոսի երար կից զույգ բեմերի միջնորմի ճակատին, 17 տող.*



⌈Ի⌉ ԺԱՄԱՆԱԿԻՆ, ՑՈՐՈՒՄ ԵՎ ՋԱԻՐՆ ՊԱՐ⌈ՍԻ⌉|Ց ՑԱՇԽԱՐՀԱ ՀԱՅՈՑ ԵՒ ԶԲԱԶՈՒՄ ԳԱՒ⌈ԱՌ⌉|Ս ԱՒԵՐԵԱՑ ԵՒ ԲԱԶՈՒՄ ԱՐԻՒՆ ՀԵ⌈ՂԻ⌉|Ն ԶԱՆՄԵՂԱՑ ԵՒ ԶԱՑԼՍՆ ԳԵՐԵՑ⌈Ի⌉|Ն⌉, ԸՆԴ ՈՐՍ ԵՒ ԶՀԱՑՐ ՊԱՒՂՈՍ ԶՊԱՏՈՒԱԿ⌈Ա⌉|Ն⌉ ՔԱՀԱՆԱՅՆ, ԶԱՆՈՒՑԻ⌈Զ⌉Ն ԻՄ ⌈Ս⌉ՊԱՆ⌈Ի⌉|Ն⌉. ԵՒ ՄԵՔ ՈՐՔ ՄՆԱԼՈՎ՝ ՓՈՔՐ ՄԻ ԽԱՂ ԱՂԱՆԱԼ, ԵՐԿՐԻՍ՝ ԵՍ ՍԷԹՍ, ՔՐ|Ո⌉Ջ ՈՐԴԻ ՊԱՒՂՈՍԻ, ՇԻՆԵՑԻ ԶԵԿԵ-

ՂԵՑ|ԻՔՍ ՑԱՆՈՒՆ ՆՈՐԱ, ԲԱՐԷԽԱՒՍ Ն|Ո|ՐԱ ԵՒ ՍԵՐ. ԵՒ ԸՆԾԱ ՑԱՌՓԻ ՁԾԱՂԿԵԼՈՑՆ |ԱՑ|ԴԻՆ ԳՆԵՑԻ ԵՒ ՏՈՒԻ ՍԲ. ՄԱՄԱՍԱՅ ԵՒ ԳՐԵՑԱՔ Ի ՏԱ-ՐՈՒՄ :Դ: ԱՒՐ ԺԱՄ ՊԵՏՐՈՍԻ| ԵՒ ՊԱՒՂՈՍԻ ՏԱՒՆԻՆ :Բ: ԱՒՐ ՊԱՒՂՈՍԻ :Ա: |Ս|ԷԹԻՆ :Ա: ԽԱԼԻՆԱՐԻՆ. ՀԱԿԱՌԱԿՈՐԴՔՆ :ՑՃԺԸ: |ՀԱՑՐ ԱՊԵՏԱՑՆ| ՆՁԼՈ-ՎԻՆ| ԵՒ ԱՌԱՋԻ ՔԻ ՄԵՐ ՄԵՂԱՑՍ ՏԷՐ Է:

Ծանոթ. *Արձանագրությունը գրված է եղել 3 շարք քարերի վրա, վերին շարքը բաղկացած է իրար կից 7 քարից, միջինը՝ 5 և վերջինը՝ 3։ Այժմ իրենց տեղումն են ստորին և միջին շարքերը միայն, այն էլ առանց տողասկզբների և վերջերը կրող մեկական նեղ քարերի։ Վերին շարքն ամբողջովին քանդված է. դրա հինգ քարերից երեքը գտանք գերեզմանատանը՝ օգտագործված որպես գերեզմանաքար։ Ընդհանուր առմամբ պակասում են արձանագրված 4—5 նեղ քարեր, որոնց վրա պետք է լիներ յուրաքանչյուր տողասկզբի և վերջի 1—2 տառերը։ Այդ պատճառով էլ հեշտությամբ վերականգնվում է արձանագրության ամբողջությունը։*

*Արձանագրության մեջ թվական չի նշված, բայց Ստ. Օրբելյանը հաղորդում է, որ Սեթ և Պավլոս կրոնավորներն այդ շենքը կառուցել են Իվանե Աթաբեկի իշխանության ժամանակ (գլ. Ծ.)։ Արձանագրության մեջ հիշատակված պարսից արշավանքներն ու ավերումները պետք է վերաբերեն Ջալալեդինի արշավանքներին, որը տեղի է ունեցել 1224 թ., հետևաբար եկեղեցիների շինությունը և արձանագրության գրվելը պետք է տեղի ունեցած լինեն դրանից հետո՝ մոտավորապես 1230-ական թվականներին։*

*Հրատ. Քաջբերունի, Փորձ, 1879, № 1, 104, Ալիշան, 162*

Լուսանկ. 191

*(Միայն երկու առաջին քարերը)։*

**524.** ***ՄԱՄԱՍԻ ՎԱՆՔԻ*** *երեսպատման մի երկարավուն քարի վրա, որն այժմ գտնվում է գերեզմանատանը, 4 տող.*



. . . Ա|ՌԱՋՆՈՐԴ| . . . ԵՍ ՍԵԹԻՆ| . . . ԱՆԴԸՄԱՆՍ Ս| . . . ՁՄԵՐ ԵԿԵՂԵՑՈ

Ծանոթ. *Սեթ անվան հիշատակությունն ապացույց է բեկորի ժամանակակցությանը նախորդների հետ։*

Լուսանկ. 192

**525.** ***ՄԱՄԱՍԻ ՎԱՆՔԻ*** *երեսպատման մի քարի վրա, որն այժմ գտնվում է գերեզմանատանը, 9 տող.*



ԵՍ ՍԵՒՃԻ, Ծ|Ա|ՌԱՅ ՄԱՐՋ|ՊԱ|ՆԱՑ, ՇԻՆԵ|ՑԻ| ՁԵ-ԿԵՂԵՑԻ|Ս| ՑԱՌԱՋՆՈ|Ր|ԴՈՒԹԵՆ. ՍԵԹ|Ի|Ն ՅԻՇԱ-ՏԱԿ ԻՆՁ ԵՒ ԱՄ|ՈՒ|ՍՆԻ ԻՄՈՅ:

Ծանոթ. *Վանքի առաջնորդ Սեթի հիշատակությունը որոշում է արձանագրության ժամանակը՝* XIII *դարի առաջին կես։*

Լուսանկ. 193

***526. ՄԱՄԱՍԻ ՎԱՆՔԻ մուտքի կողի երկարավուն և ձևավոր քարի վրա, որն այժմ օգտագործված է որպես գերեզմանաքար, 8 տող.***



ԹՎ. ։ՉԽ։ (1291)| ԿԱՄԱՒՆ ԱՑ. ԵՍ ԽՈՒՇ|ԻԹ, ՈՒՐԱՆՇԱՀԻ ՈՐԴ|Ի, ՄԻԱՑԲԱՆ ՈՒԽՏԻ ՍԲ, ՄԱ|ՄԱ˻Ս˼ԱՑ, ԵՏՈՒ ՋԻՄ| ՀԱՐԵՆԻՔՍ ՄԱՐԱՔ|ԱՆԻՆ ՍԲ. ՆԱՀԱՏԱԿ˻ԻՍ˼. ՈՎ ՈՐ| ՀԱԿԱՌԱ˻ԿԻ˼ ։ՑԾԺԸ։ ˻ՀԱՑՐԱՊԵՏԱՑՆ ՆԶՈՎԻ˼.

*Հրատ. Քաջբերունի, Փորձ, 1879, № 1, 105։ Ալիշան, 163։ (երկուսն էլ խիստ թերի և աղճատված)։*

Լուսանկ. 194

***527. ԽԱՉՔԱՐ, մեծ, կանգնած է եղել «Հին Սալլի» գյուղատեղում։***



Ի ԹՎ˻Ի˼Ս Հ˻ԱՑՈՑ˼ ։ՉԽ։ (1291)| Ի ՀԱՑՐԱ|ՊԵՏՈՒԹԵ. ՏՐ|. ՍՏԵՓԱՆՈՍԻ, ՈՐԴՈ Տ|ԱՐՍԱԻԾԻՆ|, ԲԱՐԷՊԱՇՏ ԻՇ|ԽԱՆԻՆ ԼԻՊԱՐՏԻ|Ն. ԵՍ ԽՈՒՇԻԹ ՈՒՐԱՆՇԱՀԻՆ ՈՐԴԻ, Ա|ՊՆԻՆ, ԿԱՆԿՆԵՑԻ Զ|ԽԱՉՍ ՉԱՑՍ| ԻՆՉ ԵԻ ԵՂԲԱԻՐ| ԻՄՈՑ ԴԱԻԻԹ ՔԱՀԱՆԱԻ ԵՎ| ԱՄՈՒՍ˻Ն˼Ո ԻՄՈ ՔԻՄԱԽԱԹՈՒՆԻՆ. ԲԱՐԵԽԱԻՍ ՀՈԳՈՑ ՄԵՐՈՑ։

Լուսանկ. 195

***528. ԽԱՉՔԱՐ, մեծ և պարզ, ընկած է պատվանդանից՝ նախորդի մոտ. ճակատին միայն թվականը, 1 տող.***



Ի Թ˻ՎԻ˼Ս Հ˻ԱՑՈՑ˼ ։ՉԽԱ։ (1292)

Լուսանկ. 196

**529. ԽԱՉՔԱՐ**, *մեծ և պարզ. օգտագործված է որպես գերեզմանաքար վանքի գերեզմանատան մեջ. շրջանակներին և տակին 17 տող.*



Ծանոթ. *Խաչքարը ճակատի մաս չունի, այն հավանաբար անջատ է եղել և ագուցվել է գլխին, որի կենտրոնում ելուստ կա։*

*Արձանագրության անկապ լինելն ապացույց է, որ կողքերից ես ունեցել է ինչ-որ մասեր, որոնց վրա են գրվել տողերի սկզբի և վերջին մասերը, հետևաբար խաչքարը եղել է որմնափակ։*

*Արձանագրությունը վերականգնել հնարավոր չէ։ Առանձին բառերից երևում է, որ ոմն Շահի և Հասանի որդիներ կռվել են, սպանություն է տեղի ունեցել և ինչ-որ «հայրենիք»—հողամաս որպես արնեգին է տրվել։*

Լուսանկ. 197

**530. ՄԱՄԱՍԻ ՎԱՆՔԻ** *ըեմի հյուսիսային պատին, ներքուստ.*

Կամաւն Աստուծոյ ես Գրիգոր, որդի Ասլատայ տուի սուրբ Մամասայ զիմ Դոկարցին հողն....

Ծանոթ. *Արձանագրությունն այժմ գոյություն չունի։*

Հրատ. *Բազըերունի, Փորձ, 1879, № 1, 103։ Ալիշան, 103։*




**531. ՄՈՒՏՔԻ ԿԱՄ ՊԱՏՈՒՀԱՆԻ** *կողքի ձևավոր քարի վրա. այժմ ընկած է գերեզմանատան մեջ՝ վրան 10 տող.*

Ծանոթ. *Արձանագրությունը խիստ վնասված է. եղել է նվիրատվական։*

532. *ՄՈՒՏՔԻ ԿԱՄ ՊԱՏՈՒՀԱՆԻ կողքի ձևավոր, փոքր քարի նեղ հարթության վրա. տողասկզբները հավանաբար եղել են այլ քարի վրա։*

· · ·ՊԱՐ
· · ·ԳԱՒ
· · · ·ՅԵ
· · · ԵՑԻ
· · ·ՙԱԿ

Ծանոթ. *Նախորդի նման կիսաեղծ է ու գրված փոքըր տառերով՝ վերից վար։*

533. *ԳԵՐԵԶՄԱՆԱՔԱՐ, տափակ, երեսի կենտրոնում գավազան, գտնվում է գերեզմանատան մեջ. գավազանի շուրջը 4 տող.*

ԱՅՍԷ ՀԱՆԳ
ԻՍՏ
ՏՐԱՆ ՏՈ̃Ւ
ԹՌ ՃԾԳ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՏՐ. ԱՆՏՈ[Ն]ԻՆ[Ի] .ԹՎ.
:ՌՃԾԳ: (1704)

534. *ԽԱՉՔԱՐ, ընկած է խաղողի այգիների մեջ՝ վանքից հյուսիս-արևմուտք. ճակատին 1 տող.*

ՔՍ ԱԾՈՂՈՐՄԵԱՊԱՒՂՈՍԱ

ՔՍ. ԱԾ. ՈՂՈՐՄԵԱ ՊԱՒՂՈՍԱ.

Ծանոթ. *Գծագիրն ստացել ենք Հ. Նշխաղարյանից։*

535. *ԳԱՎԹԻ արևմտյան պատի մեջ ագուցված երեսպատման քար, հին հուշարձանի շինարարական արձանագրության մաս, ներքուստ, 6 տող.*

· · ԻՆԵՑԱՒԿԱԹՈՂԻԿԷԵԿԵՂԵ
ՑԻՍՁԵՌԱՄԲՑԱՑՐԿԵՆԻԵՒ
ԻՇԽԱՆՈՒԹԻԿՈՒԿԱՒԻՆԲԿԱ
ՆՈՆԱԳԼՈՒԽՆԱՆԽԱՓԱՆԿԱ
ՏԱՐԷԲԱՒՐԺԱՄԿՈՒԿԱՒԻՆ · · ՋԱՅԼ·
· ԽԱԹՈՒՆԻՆԿԱՏԱՐԻՉ · · · · · ·

. . . Շ[Ի]ՆԵՑԱՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԵԿԵՂԵ|ՑԻՍ ՁԵՌԱՄԲ ՑԱՑՐԿԵՆԻ ԵՒ| ԻՇԽԱՆՈՒԹԻ. ԿՈՒԿԱՒԻՆ :Բ: ԿԱ|ՆՈՆԱԳԼՈՒԽՆ ԱՆԽԱՓԱՆ ԿԱ|ՏԱՐԷ :Բ: ԱՒՐ ԺԱՄ ԿՈՒԿԱՒԻՆ ՋԱՑԼԱՄ ԽԱԹՈՒՆԻՆ. ԿԱՏԱՐԻՉ[Ք] ԱՒՐՀՆԻՆ ՑԱՑ։[]

Ծանոթ. *Սկիզբը պետք է լիներ այլ քարի վրա, որն այժմ չկա։*

*Բնագրի մեջ չորս անգամ Ա տառի վերջին սեղմ դրիճը բաց է թողել, որը լրացնում ենք։*

*Վերջին երկու տողերը գրված են ավելի մանր տառերով։*

*ՋԱՑԼԱՄ ԽԱԹՈՒՆ անսովոր և կասկածելի է. բայց տառերի մնացորդներից ուրիշ կերպ վերծանել անհնար է։ Հնում ունեցել ենք Ջալլամար։*

*Ժամանակը համարում ենք* XIII *դարի կեսերը։*

*536. ԳԱՎԹԻ հարավային պատին ագուցված հին շենքի երեսպատման քարի վրա, ներքուստ, 5 տող.*



ԿԱՄԱՒՆ Ա.Յ. ԵՍ ՄԽԻԹԱՐ ՈՐԴԻ
Խ . . ⌜ՄԻԱԲԱՆԵՑԱՅ ԵԿ⌝ԵՂԵՑՈՅՍ.
ՋԱՅՍ ՄԱՐԳՍ ՈՐ ՄԵ⌜Ր . . . ՊՌ⌝ՈՇԻ
ՈՂՈՐՄՈՒԹԲ. ԱԾԱՅՏՈՒՐ ԵՒ . . .
⌜ՅԱ⌝Յ,Տ,ՆՈՒԹԵ. ԱՒՈՒՐ ՊԱՏԱՐԱԳՆ
. . . ⌜ՈՎ ԽԱՓԱՆԷ :ԳԾ: ՀԱՅՐԱՊԵ-
ՏԱՑՆ Ն⌜ԶՈՎԵԱԼ ԵՂԻՑԻ⌝։

*Ծանոթ. Տողերի շարունակությունը կրող երկրորդ քարը կորած է։*
*Ժամանակը որոշվում է, մոտավորապես, Պռոշի անվան հիշատակությամբ՝ նախքան 1284 թվականը։*

*537. ԳԱՎԹԻ արևմտյան պատի հյուսիսային մասում ագուցված խաչքարի ներքևի մասում. ներքուստ, 3 տող.*



ԿԱՆԳՆԵՑԱՒ ԽԱՑՉՍ Ի ԲԱ|ՐԵԽԱՒ-
ՍՈՒԹԻ. ՏԻՐԱՑՈՒ| ՔԱՀԱՆԱՑԻ. ՈՐՔ
ԵՐԿՐՊԱԳ⌜ԷՔ ՑԻՇԵՑԷՔ⌝։

*538. ԳԱՎԹԻ արևելյան պատի կենտրոնում ագուցված խաչքարի ներքևի մասում, ներքուստ, 4 տող.*



⌜ԿԱՆԳ⌝ՆԵՑԱՒ ԽԱՑ|⌜ՉՍ Ի ԲԱՐ⌝ԷԽԱՒՍՈՒ-
ԹԻ| ՍՏԵՓԱՆՆՈՍ ՔԱՀԱՆԱՒ ԵՒ ԱՄՈՒՍՆԻ
ՈՒՐԱ . . .

*539. ՀԱՐԱՎԱՅԻՆ ՄԱՏՈՒՌԻ արևմտյան մուտքի ճակատին, 2 տող.*



ՍԱՐԿԱՎ,ԱԳ ԻՇԵՔ։

*540. ԳԱՎԹԻ հյուսիս-արևմտյան անկյունում, ներքուստ, գերեզմանաքարի երեսին, 6 տող.*



:ՁԿԵ: (1316) ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ
ՋԱՄԱԼ| ԽԱԹՈՒՆԻՆ, ԱՄՈՒ|ՍՆԻՆ
ԳՐԻԳՈՐՈՅ. ԵՍ Ջ|ԱՄԱԼ ԽԱԹՈՒՆ
ՆՈՐ|ՈԳԵՑԻ ՋՔԱՐԱԳԼԽՈ . . .

*Ծանոթ. Հինգերորդ տողի վերջը և վեցերորդն ամբողջովին մաշվել և անվերծանելի են դարձել։*

**541.** ***ԳԱՎԹԻ** հյուսիս-արևմայան անկյունում, ներքուստ, նախորդին կից հարավից, տափակ գերեզմանաքարի երեսին, 14 տող.*



ԱՅՍ Է ՀԱ|ՆԴԻՍՏ Պ|ԱՐՈՆ ԳՐԻ|ԳՈՐԻ, ՈՐԴԻ| ԴԱ-ՄՈՒՐԴԱՇԻ|. ՑՈՐԺԱՄ ՀԱՍԱՒ| ՎԱԽՃԱՆ ԻՄ ԵԴ⌈Ա ԵՍ Ի ԴՈՒՌՆ ՏԱՃ⌈ԱՐԻՍ. ՈՎ˛ ԿԱՐԴԷՔ Ց|ԻՇԷ⌊ՑԷՔ⌋ ՔՍ. ԵՒ ՔՍ. ՁՁԵՁ Ց⌊Ի⌋ՇԷ Ի ԿԵԱՆՍ| ԹՎ :ՋԾԲ: (1533) ՀԱՑՐ|ԱՊԵՏՈՒԹԵ. ՏԱՐՍ|ԱՒՃԻՆ ՀԱՆԴԵԱՒ:

Հրատ. Քաջբերունի, Փորձ, 1879, № 1, 103։ Ալիշան, 162։



**542.** ***ԽԱՉՔԱՐ**, կանգնած է Թուխ մանուկի գավթի հարավային մուտքի դիմաց՝ շրջանակներին.*

ԱՑՍ ԽՄ ԴԻՐ Է ՈՎԱՆԻՍԻ| ԵՍ ԵՐԿՈՒ| ՈՐԴԻ ՈՒՆԻ ՔՍ. ՓՈԽԵՑԱՔ. ՄԵՐ ՑԻՇ|ԱՏԱԿ ԱԾ. ՀԱՆԱՑ. ԹՎ. :ՉԾԲ: (1303)

Լուսաենկ. 198

**543.** ***ԵՐԿՈՒ ԲԵԿՈՐՆԵՐԻ ՎՐԱ**, որոնք ընկած են Թուխ մանուկի մոտ.*



. . . Ն ԱՒՐՆ :Ա: ԺԱՄ ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀ-ՆԵԱԼ ԼԻՑԻՆ ՑԱՑ.

***544. ԽԱՉՔԱՐ**, կանգնած է Քարագլուխ գյուղից հարավ-արևմուտք, խըճուղու եզրին՝ մեծ ժայռաբեկորի վրա, տակին 6 տող.*



**Ի ԹՎ[ԻՍ] :ՉԼԹ: (1290) ԵՍ ԹԱՑԷ|ԿՍ, ԴՈՒՍՏՐ ՍԱՐԳՍԻ, ՈՐ|ԴՈՑ ԽՈՐԻՇԱՀԻ, ԿԱՆԿ|ՆԵՑԻ ԶԸ-ԽԱՉՍ Ի ԲԱՐԵ|ԽԱՒՍՈՒԹԻ. ԻՆՁ ԵՒ ԾՆ|ՈՂԱՑ ԻՄՈՑ. ՅԻՇԵՑԷՔ Ի Ք̅Ս̅:**

*Հրատ. Քաջբերունի, Փորձ, 1879, № 1, 103։ Ալիշան, 162։*

## 33. ՍԵԼԻՄԻ ԿԱՐԱՎԱՆԱՏՈՒՆ

*Գտնվում է համանուն լեռնանցքի, նրա ամենաբարձր մասի՝ դեպի Վայոց ձոր նայող հարթության վրա։*

*Կարավանատունը բաղկացած է երեք դահլիճներից, դրանցից երկուսը բացվում են իրար մեջ և ունեն մի ընդհանուր և գեղեցիկ ձևավորված մուտք, որը բացվում է փոքր դահլիճի մեջ։ Երրորդ դահլիճը պատակից է փոքրին և ունի առանձին մուտք։ Բոլոր շենքերը կառուցված են սրբատաշ քարերով, իսկ երկթեք կտուրները ծածկված են մեծ սալերով։ Իրար մեջ բացվող բոլոր դահլիճները վերջին տարիներին լրիվ վերանորոգված են. երրորդ դահլիճը կիսավեր է։*

***545. Ա. ԴԱՀԼԻՃԻ** (փոքր) արևելյան կիսակամար պատի վրա, ներքուստ 12 տ. (նույնի) բովանդակությունը՝ պարսկերեն, գրված է արաբական տառերով գլխավոր մուտքի ճակատաքարին)։*



**ՅԱՆՈՒՆ ԱՄԵՆԱԿԱՐՈՂ ՀԶԱՒՐԻՆ Ա̅Ց̅. Ի Թ̅Վ̅ :ՉՁԱ: (1332), ՅԱՇԽԱՐՀԱԿԱ-ԼՈՒԹԵ. ԲՈՒՍԱՒԴ ՂԱՆԻՆ, ԵՍ ԶԵՍԱՐ, ՈՐԴԻ ԻՇԽԱՆ|ԱՑ ԻՇԽԱՆԻՆ ԼԻՊԱՐՏԻ ԵՒ ՄԱՒՐՆ ԱՆԱՒՆ, ԹՈՌՆ ԻՎԱՆԷԻ, ԵՂԲ|ԱՐՑ ԻՄ ԱՌԻՒԾԱԳԵՂ ԻՇԽԱՆԱՑՆ**



12--362